«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ <<Ստեղծագործական կարողությունների ձևավորման պահանջը պարապմունքների ձևավորման մեջ>>

Ֆիզիրահանգիչ՝ Տաթևիկ Ղամբարյան

Մանկապարտեզ՝ «Եղեգնաձոր համայնքի թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն _____ 3

Գլուխ 1. Կառուցաղական աշխատանքները մանկապարտեզի մանկավարժական գործընթացում

1.1 Կառուցողական աշխատանքների բնույթը _____ 5

1.2 Կառուցողական աշխատանքների դերը ավագ նախադպրոցականի մտածողության և խոսքի զարգացման գործընթացներում _____ 9

1.3 Կառուցողական խաղ-պարապմունքների դերը ավագ նախադպրոցական տարիքում _____ 14

2 Գլուխ 2. Ավագ նախադպրոցական տարիքի երեխաների կառուցողական գործունեության իրականացման մանկավարժական պայմանները մանկապարտեզում

2.1 Հետազոտական աշխատանք՝ նպատակը, ընթացքը, արդյունքների վերլուծություն _____ 21

Եզրակացություն _____ 27

Գրականության ցանկ _____ 28

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի **արդիականությունը**. Նախադպրոցական տարիքում, ինչպես նշում է Լ.Վիգոտսկին, առաջատար հոգեկան գործընթացը հիշողությունն է[2], սակայն բուռն կերպով զարգանում է նաև մտածողությունը: Այս տարիքում ակնառու-գործնական մտածողությունը աստիճանաբար վերածվում է ակնառու-պատկերայինի: Այս փոփոխությանը և զարգացմանը նպաստում են գործունեության այն բոլոր ձևերը, որոնցով զբաղվում է երեխան: Մանկապարտեզում երեխաների կատարած աշխատանքները բազմազան են: Սա թույլ է տալիս նրանց պահպանել հետաքրքրությունը գործունեության նկատմամբ, նպաստում է բազմակողմանի ընկալմանը: Այդ զբաղմունքներից հիմնականը ձեռքի և կառուցողական աշխատանքներն են:

Նախադպրոցական հաստատություններում կազմակերպվում են գործունեության տարբեր ձևեր և դրանցից յուրաքանչյուրը տարբեր կերպ են անդրադառնում երեխայի մտածողության զարգացման վրա, պարապմունքների և խաղերի ընթացքում կառուցումները ոչ միայն համարվում են երեխայի մտավոր զարգացման, այլև երեխայի խոսքի զարգացման միջոց: Կառուցողական աշխատանքը արդյունավետ գործունեություն է, քանի որ նպատակաուղղված է և լուծում է իր առջև դրված խնդիրները հատկապես ավագ նախադպրոցական տարիքում, սրանով է պայմանավորված թեմայի արդիականությունը:

Հետազոտության **նպատակն** է ուսումնասիրել կառուցողական աշխատանքի բնույթը մանկապարտեզում, ներկայացնել ավագ նախադպրոցական տարիքի երեխաների հետ անցկացվող կառուցողական աշխատանքների համար անհրաժեշտ մանկավարժական պայմանները

Ուսումնասիրության արդիականությունից և նպատակից բխեցվում են հետևյալ **խնդիրները՝**

- ✓ Ուսումնասիրել կառուցողական գործունեության բնույթը, տեսակները:
- ✓ Վերլուծել կառուցողական աշխատանքների կազմակերպումը ավագ նախադպրոցական տարիքում,
- ✓ Կատարել հետազոտություն՝ կառուցողական աշխատանքներում ակնառու-գործնական և ակնառու-պատկերային մտածողության կապը բացահայտելու համար:

Հետազոտության ընթացքում օգտվել ենք հետևյալ մեթոդներից՝ դիտում, զրույց, կոնստրուկտավորում,փորձարարական աշխատանք:

Աշխատանքը կառուցված է ներածությունից, երկու գլուխներից, հետազոտությունից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից:

Գլուխ 1. ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

1.1. Կառուցողական աշխատանքների բնույթը

Նախադպրոցական մանկավարժության առարկան դաստիարակության գործընթացն է, նրա նպատակը, խնդիրները, բովանդակությունը, ձևերը, մեթոդները, նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության միջոցները [2, 9-27]:

Կառուցողական գործունեությունն իրենցից ներկայացնում է ստեղծագործական գործընթաց: Կառուցողական գործունեության սկզբնական շրջանում երեխաները թույլ են տալիս որոշակի սխալներ, սակայն հետագայում ձեռք են բերում փորձ: Կառուցողական գործունեությունը երեխային պետք է զվարճանք պատճառի:

Կառուցողական գործունեությունը զարգացնում է՝

- հիշողությունը
- մանր մոստորիկան,
- խոսքը,
- մտածողությունը
- ստեղծագործական հմտությունները,
- զարգացնում է երկրաչափական պատկերների մոդելներով կանսրուկտավորում կատարելու կարողությունը, եռաչափ ֆդիգուրներով աշխատելը,
- սովորեցնում է տրամաբանությամբ գործել, եզրակացություն անել,
- զարգացնում է տարածական պատկերացումը

Այդ գործունեությունը ուղղված է մարդու կողմից իրեն շրջապատող միջավայրի կատարելագործմանը և իրականացվում է մտածված էսթետիկական և կամպոզիցիոն կապերի շնորհիվ: Գեղարվեստական կառուցումը՝ դիզայներական աշխատանքը դա մարդու մտքի արտադրանքն է, որը ապահովում է նրա բարեկեցությունը և հարմարավետությունը[5]: Կանսրուկտավորման կամ կառուցողական աշխատանքները պարտադրում է որպեսզի ապահովվի իր համապատասխանությունը, ներդաշնակությունը շրջակա միջավայրին: Այս գործունեությունը իրականացնում է նկարիչ- կառուցողը (դիզայները), կիրառելով իր աշխատանքի մեջ գիտական բացահայտումները և հետազոտության արդյունքները: Այս գործունեությունը հիմնված է տեխնիկական գեղագիտության, մի շարք տնտեսական և ինժիներական տվյալների, սոցիոլոգիայի, հոգեբանության և գիտության այլ ճյուղերի վրա: Կանսրուկտավորման աշխատանքը հիմնվում է նկարչական –կառուցողական գործունեության սինթեզի վրա: Այս աշխատանքի համար բնորոշ է առարկայի վերամշակման, ցանկացած փուլում նրա մոդելավորման և վերաձևավորման գործընթացը, որի արդյունքում մարդը կատարում է հետևյալ գործընթացները; փնտրում և ընտրում է կոմպոզիցիոն աշխատանքի արդյունավետ տարբերակը, որոնում տարբեր նյութեր, պատրաստում բազում տարբերակներ վերջնական արդյունքի /կոմպոզիցիայի/ համար:

Նկարչական կանսրուկտավորման աշխատանքը զարգացում է երեխայի տրամաբանությունը: 18-րդ դարի սկզբում երբ ձեռքի աշխատանքից մեքենայականին անցնելու ժամանակ հանգեցրեց նրան, որ տեղի ունեցավ <<ամբողջական տեխնիկական հեղաշրջում>>: Արևմտյան Եվրոպայում նկարչական կանսրուկտավորման աշխատանքի հիմքերը դրել են նկարիչների, կառուցողների և ինժիներների իրենց տեսական և գործնական աշխատություններում (Պ. Բրենսա, Բ. Գրոպիուս, Գ. Զեմպերա, Գ. Մոտեզիուսիայի և այլն):

Կախված այն բանից, թե ինչ նյութից են կառուցում իրը տարբերում ենք՝

- ***Կառուցում շինարարական նյութերով***
- ***Թղթով կառուցում, ստվարաթղթից, արկղորից, կատուշկաներից և այլն***
- ***Բնական նյութերով կառուցու***
- ***Խաղային նյութերով կառուցում, որը կառուցման ավելի պարզ ձև է***
- ***Տարբեր երկրաչափական ձևեր, որոնք մաթեմաթիկական ճշգրիտ չափեր ունեն։***

Թուղթը դարձնելով խորանարդի ձևով, ստեղծվում են ուղիղ անկյուններ: Մինչ խաղալիքի կառուցելը պետք է նախ կառուցել տարրերը, զարդերը, անել անհրաժեշտ կտրվածքները և միայն դրանից հետո սոսնձել և կպցնել խաղալիքը:

Բնական նյութերով աշխատանքը պետք է սկսել փոքրերի 2-րդ խմբից: Առաջին հերթին ջուրն է, ավազը, ձյունը: Ավելի մեծ տարիքում կիրառվում է ներկված ջուր՝ տարբեր գույնի սառցե կտորներ ստանալու համար:

Սկսած միջին խմբից երեխաները բնական նյութերից պատրաստում են տիկնիկներ, խաղալիքներ:

Մանկական կառուցողական աշխատանք. Սրա տակ ընդունված է հասկանալ շինարարական նյութերով պատրաստված բազմազան շինություններ: Իր բնույթով այն մոտ է տարրական մաթեմատիկական հաշվարկին և խաղային գործունեությանը: Նրանում արտացոլվում է շրջակա իրականությունը և պատրաստածը ծառայում է գործնականում օգտագործելու կամ գեղագիտական հաճույք պատճառելու համար: Հետևաբար այն պետք է համապատասխանի իր նշանակությանը: Մանկապարտեզի կրթական ծրագրերում, բոլոր տարիքային խմբերի երեխաների հետ տարվող

աշխատանքում, մեծ տեղ է հատկացվում կոնստրուկտավորմանը, քանի որ այն ունի հատուկ նշանակություն մտավոր, բորոյական, էսթետիկական, աշխատանքային դաստիարակության իրականացման համար:

Կոնստրուկտավորումը կամ կառուցողական աշխատանք երեխայի համար հանդիսանում է գործունեության բավականին բարդ տեսակ, որում կա կապ նկարչական և կառուցողատեխնիկական գործունեության միջև: Որպես կանոն մանկական կառուցողական կոնստրուկտավորումից ստացված արդյունքները ընդունված է նախատեսել խաղալու համար[3]:

Ս. Մակարենկոն նշում եր, որ երեխայի խաղը խաղալիք-նյութերի հետ, ամենից մոտ են կանգնած նորմալ մարդկային գործունեությանը: Նյութերից մարդը ստեղծում է արժեքներ և մշակույթ: Դրանով, փաստորեն երեխայի կոնստրուկտոր գործունեությունը մոտ է մեծերի կոնստրուկտոր-տեխնիկական գործունեությանը, չնայած որ այն դեռևս չի ներկացնում հասարակական նշանակություն: Երեխան հասարակության ո՛չ նյութական, ո՛չ էլ մշակութային արժեքների մեջ նորամուծություն չի մտցնում: Սակայն մեծերի կողմից երեխայի գործունեության վերահսկումը և ուղղորդումը հսկայական դրական ազդեցություն է ունենում նախադպրոցականի աշխատանքային դաստիարակության համար[5]:

Մանկական կոնստրուկտավորումը կարող է լինել նկարչական և տեխնիկական: Սրանցից յուրաքանչյուրն ունի իր առավելությունները, որը պահանջում է դրանցով առաջնորդվելիս տարանջատել դրանք: Նախադպրոցականի կոնստրուկտորական ունակությունները դերային խաղի բնույթ ունեն: Կախված այն բանից, թե ինչ նյութից են երեխաները պատրաստում իրենց շինությունները և կոնստրուկցիաները տարբերում ենք՝ շինարարական նյութերից, թղթից, ստվարաթղթից և բնական նյութերից պատրաստված կոնստրուկցիաներ[3]:

Շինարարական հավաքածուների մասերը իրենցից ներկայացնում են ճշգրիտ երկրաչափական մարմիններ՝ իրենց մաթեմատիկական չափերով: Դրանք ստեղծում են հնարավորություն, որպեսզի երեխան նվազագույն դժվարությամբ տանա

առարկայի կոնստրուկցիան: Բացի շինարարական նյութերից, խորհուրդ է տրվում կոնստրուկտոր, որը իրար ավելի ամուր է ամրանում: Առավել հաճախ օգտագործում են փայտը, որի ամրացումն ավելի հեշտ է, օգտագործում են նաև մետաղ, որոնց ամրացումն ավելի դժվար է: <<Կոնստրուկտոր>> խաղում երեխաները սովորում են լուծել առավել բար կոնստրուկտիվ խնդիրներ, ծանոթանում են դետալների միացման տարբեր ձևերին, ստեղծում են բազմազան շարժվող կոնստրուկցիաներ: Թղթից, ստվարաթղթից, խորանարդից պատրաստված կոնստրուկցիաները մանկապարտեզում հանդիսանում են կառուցողական /կոնստրուկտավորման/ առավել բարդ տեսակ: Երեխաները առաջին անգամ դրանց ծանոթանում են միջին խմբում: Երբ երեխաներից ինչ-որ մեկին հաջողվում է հավաքել ծավալուն կառույց՝ բուրգի կամ խորանարդի տեսքով, դաստիարակը կարող է առաջարկել պատրաստել մեծ, հարթ մակերես հիմքի համար: Երեխաների մեջ, անպայման, կլինեն այնպիսիք, ովքեր կսովորեն իսկույն պատրաստել կառույց: Զգալի քանակով երեխաների մոտ միայն մի քանի պարապմունք հետո նկատվում են դրական արդյունքներ; երեխաները տիրապետում են ամրացման հիմանական միջոցներին, հասնում որոշակի արդյունքների, կարողանում են սեփական մտահաղացման համաձայն պատրաստել կառույցներ:

1.2. Կառուցողական աշխատանքների դերը ավագ նախադպրոցականի մտածողության և խոսքի զարգացման գործընթացներում

Ավագ նախադպրոցական տարիքում (5-6 տարեկան) նպատակահարմար է երեխաներին առաջարկել հսկայածավալ տարածական պլաստմասե կոնստրուկտորներ <<Կվադրո>> ձևի ինքնուրույն գործունեության համար, ինչպես տարածքում, այնպես էլ դրսում: Արժեքավոր է, որ յուրաքանչյուր այդպիսի մեծ կառույցի մոտ կա դրա փոքր տարբերակը: Դա հնարավորություն է տալիս երեխաներին սկզբում աշխատեցնել սեփական մտքերը մոդելավորման եղանակով,

մանր էլեմենտներից, իսկ դրանից հետո այդ մոդելները վերածել մեծածավալ կառույցների, որոնք կարող են կառուցել բավականին երկար ժամանակ:

Կարելի է առաջարկել առանձնացնել առաջադրանքի ձև. կառուցել ճաշասենյակի կահույք՝ աթոռներ և սեղան, ինչպես նաև այդ կառույցների ֆունկցիոնալությունը ընդգծող առաջադրանքներ (կառուցումը պայմաններին համաձայն). օրինակ կառուցել բլոկ, որի վրա կարող են բարձրանալ երեխաները և սահել նրանից, կամ էլ կառուցել երկար սողնակ՝ 4 անիվներով, աղբը տեղափոխելու համար, մեծ փափուկ խաղալիքներ և այլն:

<<Կվադրո>> կառուցումը խմբակային աշխատանք է, որը թույլ է տալիս ստեղծել հարթ կառույցներ տարբեր թեմատիկաներով, որը երեխաները կարող են օգտագործել իրենց նշանակությամբ. մեծ <<շարժիչներ>> անիվների վրա, մոբերտներ նկարելու համար, ցուցանակներ ցուցահանդեսի համար, ջերմոցներ տարածքում, սպորտային պարագաներ, յուրահատուկ միջավայր ճոճանակներով և այլն:

Կոմպոզիցիայում 2-3 երկրաչափական մարմինների համադրում հիմնական գույների հետագա երանգավորում ՝ կարմիր, կապույտ, դեղին, թղթից խորանարդի պատրաստում և 1 կամ 2 գույնով նախշանկարում: Արդյունքների ամփոփում, հաշվետու ցուցահանդեսի կազմակերպում:

Ավագ նախադպրոցական խմբում պարապմունքների ժամանակ կիրառվում են այնպիսի մեթոդներ և ուսուցման ձևեր, որոնց միջոցով հնարավոր է երեխաներին սովորեցնել կառուցել տարբեր բնույթի աշխատանքներ: Ուշադիր ուսումնասիրելով շինությունը երեխաները կարողանում են պատրաստել ինքնուրույն, և դաստիարակը բացատրում է պատրաստածի նշանակությունը: Օրինակ՝ աստիճանները պատրաստելուց հետո դաստիարակը բացատրում է թե ինչպես կարելի է աստիճաններով բարձրանալ և իջնել:

- **Երեխաները սովորում են աշխատել բանական և արհեստական նյութերով**

Բնական նյութերի հետ աշխատանքը հասանելի է աշակերտներին սկսած ամենակրտսեր տարիքից: Երեխաները պատրաստում են աշխատանքներ պտուղներից, սերմերից, ճյուղերից և այլն, որոնց միացումն իրականանում է պլաստիրինով: Օգտագործվում են նաև կոներ, բայց դրանք արագ չորանում են և կորցնում են իրենց ձևը: Կոնի ձևը պահպանելու համար այն պետք է ընկղմել ստեղծագործական սոսնձի մեջ, մինչև օդը թեփուկների տակից պղպջակներով դուրս գա: 5-7 տարեկան երեխայի կառուցողական աշխատանքները Սկզբանական շրջանում երեխաներին տրվում է տարբեր չափսերի խորանարդիկներ, դրա հետ մեկտեղ առաջադրանք, կառուցել մեքենա, տուն և այլն:

Այդ շրջանում ուշադրությունը չեն կենտրոնացնում խորանարդի գույներին: Այն զարգանում խաղի ընթացքում է երեխաների տարածության, ժամանակային պատկերացումների զարգացման սինթեզում: 2-րդ դասարանում երեխաները սովորում են երևակայական պատկերներով: Սովորում են կառույցի բարձրության, երկարության, լայնության, մեքենայի, բեռնատարի չափսերը և ալն: Շատ կարևոր է տեխնիկական մոդելի դերը: Դա կարելի է ստեղծել տարբեր նյութերից՝ պլաստիրին, կավ: Կարելի է կառուցել սկզբնական շրջանում նմուշով, որից հետո արդեն իրենց կողմից փոփոխություններով:

Կառուցումը այնպիսի գործընթաց է, որտեղ յուրաքանչյուր անձ կարող է գտնել տարբեր մոդելների ստացման իր եղանակը: Յուրաքանչյուր կառուցողական խաղի համար կան բազմաթիվ կոնստրուկտորներ: Նախադպրոցական տարիքում՝օրինակի, Երկրաչափական պատկերների համաձայն, Օրինաչափական, Օրիգամի, Լեգո, Խճանկար,Զարգացնող խաղ:

Երեխայի խելքը գտնվում է մատների ծայրերին՝ Սուխոմլինսկի

Երեխաների մտածողությունը զարգացնելու գործում շատ կարևոր է մանր մոտորիկայի (ձեռքերի մանր մկանային համակարգի) դերի արժևորումը: Այդ են վկայում վերջին տարիների հետազոտությունների արդյունքներն այն մասին, որ երեխաները առօրյայում և ուսումնական գործընթացում շատ դժվարություններ և

խնդիրներ են ունենում այն պատճառով, որ զարգացած չէ նրանց մանր մոտորիկան: Չէ՞ որ մանր մոտորիկայի զարգացումը ակտիվացնում է ուղեղի աշխատանքը, խթանում է նրա խոսքի, մտածողության, տրամաբանության զարգացումը: Եթե երեխան ունի զարգացած ընդհանուր մոտորիկա, ապա նա կարողանում է հստակ կառավարել իր շարժումները, ունի զարգացած հիշողություն, ուշադրություն, տրամաբանություն և կապակցված խոսք:

Մարդու գլխուղեղում խոսքի և ձեռքի մատների շարժումները կոորդինացնող կենտրոնները գտնվում են հարևանությամբ: Նախադպրոցականի մտավոր զարգացումը տեղի է ունենում գործունեության միջոցով. Շփման, առարկայական, խաղի, աշխատանքային, արդյունավետ գործունեության ընթացքում, նկարչություն, ծեփակերտում, ապլիկացիա, կառուցողական աշխատանքներ, ձեռքի աշխատանք: Կառուցողական աշխատանքները և ձեռքի աշխատանքը համարվում են գործնական գործունեություններ, որոնք ուղղված են որոշակի արդյունքի ստացմանը, նախապես որոշված նյութերով: Մանկական կառուցողական աշխատանքները սերտորեն կապված են խաղի հետ և համարվում են այնպիսի գործունեություններ, որոնք վերաբերում են երեխայի հետաքրքրություններին: Կառուցողական աշխատանքները երեխայի մտավոր զարգացման միջոց են: Զարգանում են նաև շարժողական ունակությունները: Այստեղ շարժողական գործընթացները գոյություն ունեն ոչ թե գործունեությունից առանձին, այլ նրանում գոյություն ունեն բազմաթիվ հնարավորություններ:

Խոսքը ձևավորվում է երեխայի ընդհանուր հոգեֆիզիկան զարգացման գործընթացում: Երեխայի սեփական խոսքը դառնում է ավելի ճիշտ. շարահյուսորեն,քերականորեն և ձևաբանորեն: 3 տարեկանում ձևավորվում են հիմնական բառապաշարային քերականական կառույցները , որոնք անհրաժեշտ են երեխաներին խոսելու համար: Այդ ժամանակ երեխան անցում է կատարում ֆրազային խոսքին: 5 տարեկանում զարգանում է շնչառական և արտաբերման կոորդինացիան, որը մեծ դեր ունի խոսքի զարգացման ընթացքում: 6 տարեկանում երեխաների մոտ

սկսում է ձևավորվել ձայնային անալիզը և սինթեզը: Խոսքի նորմալ զարգացումը երեխային թույլ է տալիս անցնել նոր փուլ՝ գրավոր խոսքի յուրացում: Նորմալ զարգացման պայմաններում խոսքը գոյություն կարող է ունենալ նորմալ լսողության, տեսողության և մեծահասակների հետ ակտիվ խոսքային շփման արդյունքում:

Կառուցողական խաղերի դերը երեխաների խոսքի զարգացման գործում շատ մեծ է: Խաղը ծագում է վաղ մանկության վերջում առարկայական-մանիպուլյատիվ գործունեությունից: Ի սկզբանե, երեխան կլանված է առարկայով և նրա հետ գործողություններով: Գործողություններին տիրապետելով՝ երեխան սկսում է գիտակցել, որ գործում է ինքնուրույն և գործում է, ինչպես մեծահասակը: Ինչպես գրում է Դ. Էլկոնինը, նա նայում է առարկային մեծահասակի միջոցով, ինչի շնորհիվ մեծահասակը և նրա գործողությունները երեխայի համար դառնում են օրինակ ոչ միայն օբյեկտիվորեն, այլև սուբյեկտիվորեն: Այսպես խաղը զարգանում և նախադպրոցական տարիքի վերջում հասնում է զարգացման բարձր մակարդակի: Խաղը նախադպրոցական տարիքի առաջնային գործունեությունն է, որը նշանակալից ազդեցություն է թողնում երեխայի զարգացման վրա: Առաջին հերթին. Կառուցողական խաղերի, պարապմունքների միջոցով երեխաները սովորում են լիարժեք շփվել միմյանց հետ: Կրտսեր նախադպրոցականները դեռ չեն կարողանում շփվել իրենց տարիքակիցների հետ: Ինչպես ասում է Դ. Էլկոնինը. նրանք «խաղում են կողք կողքի, բայց ոչ միասին»: Բնականաբար խաղը կարող է լինել ինչպես զվարճանք, այնպես էլ տեխնոլոգիա նրանց մտավոր ունակությունները զարգացնելու համար: 5-6 տարեկան հասակում երեխան անընդմեջ կարիք է ունենում խաղալու, նրան արդեն իսկ հետաքրքիր են դառնում խաղեր, որոնք հանդիսանում են <<կառուցողական>> բնույթի, որոնց լուծման համար անհրաժեշտ է մտածել: Կարևոր է սկզբնական շրջանում, երբ նա ծանոթանում է նման խաղերի հետ ուղություն ցույց տալ, բացատրել դրա իմաստը, իր առջև դրված խնդիրը և իր պարտականությունները: Հենց այս ամենն էլ զարգացնում է երեխայի խոսքը,մտածողությունը, հիշելու և կողմնորոշվելու հատկությունները:

Որպեսզի երեխայի նկատմամբ կիրառվի զարգացման տեխնոլոգիաներ անհրաժեշտ է իմանալ երեխայի՝ մտածելակերպի, հիշողության, վարվելակերպի և

հոգեբանական խնդիրների մասին: Նախադպրոցականը մտածում է պատկերավոր, նա դեռ ձեռք չի բերել դատողությունների հասուն տրամաբանությունը: Չնայած դրան՝ նախադպրոցականները կարող են ճիշտ դատել և լուծել բավական բարդ խնդիրներ: Առաջին հերթին, երեխան պետք է հասցնի մտապահել առաջադրանքը: Կառուցողական աշխատանքներ հանձնարարելիս, առաջադրանքի պայմանները պետք է պատկերացնի, իսկ դրա համար պետք է հասկանա դրանք: Դրա համար էլ պետք է այնպես ձևակերպել խնդիրը, որ այն հասկանալի լինի երեխաներին: Ճշմարիտ լուծման հասնելու լավագույն միջոցը երեխայի գործողություններն այնպես կազմակերպելն է, որ նա համապատասխան եզրակացություններ կատարի սեփական փորձի հիման վրա: Այս կերպ, բարենպաստ պայմաններում, երբ նախադպրոցականը լուծում է իր համար հասկանալի, հետաքրքիր առաջադրանք և դրա հետ մեկտեղ դիտարկում իր հասկացողությանը հասանելի փաստեր, նա կարող է տրամաբանորեն ճշմարիտ դատել: Նախադպրոցական տարիքի վերջում ի հայտ է գալիս ընդհանրացման, կապերի հաստատման միտում: Վերջինիս ծագումը շատ կարևոր է ինտելեկտի և խոսքի հետագա զարգացման համար, չնայած նրան, որ երեխաները հաճախ սխալ ընդհանրացումներ են անում՝ կողմնորոշվելով առարկաների, երևույթների վառ հատկանիշների վրա: Ինչպես գտնում էր Վիգոտսկին, հիշողությունը դառնում է գերակայող ֆունկցիա և անցնում զարգացման մեծ ուղի իր կայացման գործընթացում: Ոչ այս տարիքից առաջ, ոչ հետո, երեխան այսքան հեշտությամբ չի մտապահում ամենաբազմազան ինֆորմացիան:

1.3. Կառուցողական խաղ-պարապմունքների դերը ավագ նախադպրոցական տարիքում

Երեխաների կառուցողական աշխատանք ասելով ընդունված է հասկանալ տարբեր կառույցների և մոդելների ստեղծումը կառուցողական նյութերից և կոնստրուկտորների մասերից, թղթից, ստվարաթղթից, տարբեր բնական նյութերից: Առանձնացվում են երկու տիպի նախագծում՝ տեխնիկական և գեղարվեստական: Տեխնիկական կառուցողական աշխատանքների ժամանակ երեխաները պատկերում

են իրականում գոյություն ունեցող օբյեկտներ: Կարող են նաև հնարել կոնստրուկցիաներ՝ նմանեցնելով հեքիաթների և ֆիլմերի հերոսներին: Կառուցողական աշխատանքը արդյունավետ գործունեություն է, եթե համապատասխանում է նախադպրոցականների կարիքներին և պահանջներին: Ստեղծված շինվածքները երեխաները օգտագործում են խաղերում, բեմականացումների մեջ, ինչպես նաև որպես նվեր, շենքերի ձևավորման համար և այլն: Որը նրանց մեծ բավականություն է պատճառում:

Երեխաների կառուցողական աշխատանքը, հատկապես տեխնիկականը, սերտ կապված է խաղային գործունեության հետ: Երեխաները ստեղծում են շինվածքներ (տնակ, ավտոտնակ, ասպետի դղյակ և այլն), խաղում են դրանցով, բազմաթիվ անգամ խաղի ընթացքում վերակառուցում և փոփոխում դրանք: Մի շարք արտասահմանյան ուսումնասիրողներ հիմնավորում են, որ կառուցողական աշխատանքը նույնպես մանկական խաղի տեսակ է:

Կառուցողական աշխատանքներում առկա են երկու փոխկապակցված փուլեր՝ գաղափարի ստեղծում և դրա իրագործում: Որպես կանոն, ստեղծագործությունն ավելի շատ կապված է մտահղացման հետ, քանի որ այն հանդիսանում է ապագա պրակտիկ գործունեության ընթացքը պատկերացնելուն և պլանավորելուն: Ինչպես նաև վերջնական արդյունքը պատկերացնելուն, ձեռքբերումները գնահատելուն և հետևողականություն ձևավորելուն: Եվ միայն ավագ նախադպրոցական տարիքում է երեխան կարողանում իր մտածածից գնալ դեպի դրա իրականացումը:

Կոնստրուկտավորումը միաձույլ է սյուժետա-ցուցադրական խաղի հետ: Այն արտահայտվում է և' որպես տարր, և' որպես միջոց պարզ սյուժեներ ցուցադրելու համար: Վերջինս իր հերթին առիթ է հանդիսանում ոչ բարդ կոնստրուկցիաներ ստեղծելու համար: Դրա համար էլ այն կոչվում է սյուժետային կոնստրուկտավորում:

5-6 տարեկան երեխաներին կարելի է առաջարկել երեք թեմա. <<Բեռնատար մեքենաներ>>, <<Ավտոտնակներ>>, <<Բլուրներ>>: <<Բեռնատար մեքենաներ>> թեմայով նմուշը յուրացնելուց հետո առաջարկվում է նրա տեսքը փոփոխել՝ կառուցել

երեք տարբեր կոնստրուկցիայի մեքենաներ որոշակի բեռների համար: Վերջին պարապմունքին կառուցել կահույք տեղափոխող մեքենա, կահույքը պատրաստվել է երեխաների կողմից, դաստիարակի հետ միասին լուցկու տուփերից[1]:

Կառուցողական աշխատանքների շնորհիվ զարգանում է տարածական կողմնորոշումը: Կառուցելով առարկան՝ երեխան հստակեցնում է տվյալ առարկայի՝ տարածության մեջ գտնվելու վայրը: Այս պատկերացումները կատարելագործվում են այն ժամանակ, երբ նա խաղալիք է ստեղծում, կտրտելով և սոսնձելով մանր դետալները: Այսպիսով՝ տարածական կողմնորոշման ձևավորումը տեղի է ունենում դիտողական նյութերով, ընդ որում ավելի բարդ կառուցման խնդիրները պահանջում են ավելի բարդ մտածական գործունեություն:

Ուսուցման գործընթացում երեխայի տարբեր խաղալիքների կառուցումները պայմաններ են ստեղծում ստեղծագործական ունակությունների զարգացման համար: Կարծես երեխան յուրացնում է պատրաստի խաղալիքի սխեման, գտնելով նրա և՛ նման, և՛ տարբեր հատկությունները:

Ուսուցման գործընթացում կառուցումները երեխաների մեջ նաև առաջացնում են այնպիսի ընդհանրացված գործողություններ, ինչպիսիսք են առարկայի կամ խաղալիքի նպատակաուղղված զննումը: Երեխաները սովորում են պլանավորել աշխատանքը, այն պատկերացնելով ամբողջապես, սովորում են վերահսկել իրենց գործողությունները, ինքնուրույն ուղղել սխալները: Այս ամենը կառուցման գործընթացը դարձնում է մտածված[1]:

Պարապմունքների ընթացքում կառուցելով՝ երեխաները յուրացնում են դետալների ճիշտ երկրաչափական անվանումները, սովորում են երկրաչափական մարմինների առանձնահատկությունները,քառակուսու կողմերը հավասար են:

Կառուցումները նպաստում են երեխաների խոսքի զարգացմանը, քանի որ գործունեության ընթացքում կիսվում են մտքերով, սովորում են շփվել միմյանց հետ: Կառուցման ժամանակ երեխաները սովորում են ճիշտ անվանել տարածական

կողմերը,վերև, ներքև, աջ, ձախ, մոտիկ, հեռու, յուրացնում են նաև այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են <<բարձր, ցածր, լայն, նեղ>>:

Պարապմունքների և խաղերի ընթացքում կառուցումները ոչ միայն համարվում են երեխայի մտավոր զարգացման, այլև երեխայի անձնավորության բարոյական որակների զարգացման միջոց: Ընկերներին պատրաստած խաղալիքների նվիրումը դաստիարակում է բարոյական զգացմունքներ: Ինքնուրույն պատրաստած խաղալիքներով խաղերը դրդում են խաղերի, իսկ դա նշանակում է, որ այն նպաստում է ընկերական կոլեկտիվի զարգացմանը: Բացի այդ, կոլեկտիվ խաղերը նպաստում են սեփական աշխատանքների քննարկմանը, անհրաժեշտության դեպքում ընկերոջ օգնությանը դիմելու կարողության զարգացմանը, բացատրելու ցանկությունները: Բացի այդ, կառուցումները նպաստում են անձնավորության այնպիսի արժեքավոր որակների զարգացմանը, ինչպիսիք են ինքնուրույնությունը, պատասխանատվությունը, նախաձեռնողականությունը և այլն: Կառուցողական գործունեության ընթացքում երեխաների մեջ ձևավորվում են ընդհանրացված պատկերացումներ: Այդ ընդհանրացումները հայտնվում են պատկերացումների հիման վրա, որոնք ստացվում են տարբեր անմիջական ընկալումներից: Պատկերացումների ձևավորմանը նպաստում է կառուցողականության զարգացումը:

Գլուխ 2. ԱՎԱԳ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ

2.1 Հետազոտական աշխատանք՝ նպատակը, ընթացքը, արդյունքների վերլուծություն

Հետազոտական աշխատանքն իրականացրել ենք Վայոց Ձոր մարզի Մալիշկա համայնքի թիվ 2 «Չիպոլինո» մանկապարտեզի ավագ խմբում, հետազոտությանը մասնակցել է 15 երեխա:

Հետազոտության **նպատակն է** ուսումնասիրել ավագ նախադպրոցականների համագործակցային կարողությունները կառուցողական գործունեության ընթացքում, բացահայտել կառուցողական աշխատանքի և մտածողության կապը:

Հետազոտական աշխատանքն իրականցրել ենք հաջորդական փուլերով, պարզելու համար երեխաների կառուցողական կարողությունների մակարդակը, դրանց կապն ու ազդեցությունը երեխայի խոսքի և մտածողության վրա: Հետազոտության ընթացքում կիրառել ենք մի քանի մեթոդիկաներ, որոնք ներկայացնենք ստորև.

Մեթոդիկա. «Ո՞րն է ավելորդ»

Այս մեթոդիկան նախատեսված է 5-6 տարեկան երեխաների համար:Այն նախատեսված է երեխայի պատկերային-տրամաբանական մտածողությունը, իմացական գործընթացների վերլուծությունն և ընդհանրացումն ուսումնասիրելու համար: Երեխային տալիս ենք նկար, որտեղ ներկայացված են տարբեր առարկաներ, այնուհետև տալիս ենք հրահանգը.

«Յուրաքանչյուր նկարի մեջ պատկերված չորս առարկաներից մեկն ավելորդ է: ՈՒշադիր նայիր և որոշիր, թե որ պատկերն է ավելորդ և ինչու»:

Մեթոդիկա . «Որ մասնիկն է պակասում նկարում»

Նպատակ – բացահայտել երեխաների մտավոր զարգացվածության աստիճանը, բացահայտել թե որքանով է երեխան ճիշտ տրամաբանում և որքանով է արագ կողմնորոշվում:

Ընթացք – Երեխային առջև դրված է 3 տարբեր պատկերներ, որում պատկերված են տարբեր իրավիճակներ և առարկաներ, ամեն մի նկարում մի մասնիկ է պակասում: Տրվում է հրահանգ՝ գտի՛ր թե ո՞ր մասնիկն է բացակայում յուրաքանչյուր նկարում:

Մեթոդիկա . «Ինչ պատկերներ են թաքնված նկարներում»:

Նպատակ – բացահայտել երեխաների մտավոր զարգացվածության աստիճանը,բացահայտել թե որքանով է երեխան ճիշտ տրամաբանում և որքանով է արագ կողմնորոշվում :

Ընթացք –Երեխային տալիս ենք թուղթ որտեղ պատկերված են տարբեր նկարներ, որոնք թաքնված են միմյանց մեջ: Երեխային տրվում է հրահանգ քանի տարբեր պատկերներ ես տեսնում մեկ նկարում: Երեխայի պատասղանի համար տրվում է հատուկ ժամանակ:

Մտածողությունը զարգացնող հետազոտական աշխատանքի ընթացքում անցկացրել ենք հետևյալ պարապմունքները.

Նախադպրոցական տարիքի երեխաների մտավոր դաստիարակությունը մանկապարտեզի ուսումնադաստիարակչական աշխատանքի կարևորագույն խնդիրներից մեկն է, որի իրականացումը նշանակում է՝ երեխային տալ ոչ միայն գիտելիքներ,այլև ձևավորել նրա անձնավորությունը: Երեխաների մտածողությունը զարգացնելու գործում շատ կարևոր է մանր մոտորիկայի դերի արժևորումը, չէ՞ որ մանր մոտորիկայի զարգացումը ակտիվացնում է ուղեղի աշխատանքը,խթանում է խոսքի, մտածողության,տրամաբանության զարգացմանը: Օրիգամին օգնում է զարգացնել մաթեմատիկական մտածողությունը՝կշռադատել, տարածական մտածել, փնտրելառաջադրանքի լուծման ոչ ստանդարտ եղանակներ:Բացի վերը թվարկվածներից, օրիգամի պատրաստվածքները կարող են գեղեցիկ նվերներ լինել:Սեփական ձեռքերով հուշանվերներ պատրաստելով, երեխան հրճվանք է զգում ստեղծագործելիս:Այն բարձրացնում է երեխայի ինքնագնահատականը, մղում ավելի գեղեցիկ ու բարդ պատկերներ պատրաստելուն[5]:

Պարապմունք 1 Տեխնիկա օրիգամի <<Եղնի>>[6]

Նախադպրոցական տարիքի երեխաների մտավոր դաստիարակությունը մանկապարտեզի ուսումնադաստիարակչական աշխատանքի կարևորագույն խնդիրներից մեկն է, որի իրականացումը նշանակում է ՝ երեխային տալ ոչ միայն գիտելիքներ,այլև ձևավորել նրա անձնավորությունը: Երեխաների մտածողությունը զարգացնելու գործում շատ կարևոր է մանր մոտորիկայի դերի արժևորումը, չէ՞ որ մանր մոտորիկայի զարգացումը ակտիվացնում է ուղեղի աշխատանքը,խթանում է խոսքի, մտածողության,տրամաբանության զարգացմանը: Օրիգամին օգնում է զարգացնել մաթեմատիկական մտածողությունը՝կշռադատել, տարածական մտածել, փնտրելառաջադրանքի լուծման ոչ ստանդարտ եղանակներ:Բացի վերը թվարկվածներից, օրիգամի պատրաստվածքները կարող են գեղեցիկ նվերներ լինել:Սեփական ձեռքերով հուշանվերներ պատրաստելով, երեխան հրճվանք է զգում ստեղծագործելիս:Այն բարձրացնում է երեխայի ինքնագնահատականը, մղում ավելի գեղեցիկ ու բարդ պատկերներ պատրաստելուն:

Պարապմունքի ընթացքում մեծ ակտիվություն էր նկատվում ,երեխաները պատրաստում էին եղնի մեծ հետաքրքրությամբ, քանի որ երեխաները նոր էին ծանոթանում տեխնիկայի հետ ,լինելով նրանց թվով 4 պարապմունքը մեծ հետաքրքրությամբ և միմյանցից հուշումներ ստանալով փորձում էին ավարտին հասցնելով ստանալ խրախուսական բառեր:

Պարապմունք 2 `Նկարչություն

Նկարչությունը բոլորիս կողմից շատ հայտնի և սիրված արվեստի ճյուղ է: Մենք այն կդիտարկենք որպես գործիք երեխայի մտածողությունը, ունակությունները զարգացնելուհամար: Նկարչությունը բավականին մեծ հասկացողություն է, քանի որ այն համախմբում է տարբեր նկարչական ոճեր, տեսակներ, որոնք բազմաթիվ են: Մենք կխոսենք ընդհանուր նկարչության, նրա ազդեցությունների, երեխայի մոտեցումների մասին: Փորձը ցույց է տալիս, որ եթե փոքր երեխային ծանոթացնել նկարչության հետ, նա ժամանակ առ ժամանակ նկարելու ցանկություն կհայտնի: Նկարելով երեխան թղթին է հանձնում այն ինչ նա պատկերացնում է, բայց չի կարող արտահայտել բառերով: Իսկ երեխայի պատկերացումը այնքան մեծ է, որ նա կարողէանվերջ նկարել: Չի բացառվում, որ երեխայի նկարածը չհամապատասխանի այն իրական առարկային կամ իրադարձությանը, որը նա նկարելէ, սակայն հետաքրքրական է այն, որ նա իր նկարածի մեջտ եսնում է այդ ամենը, հետևաբար երեխային պետքէ խրախուսել և փորձել նրան ճիշտուղղություն տալ: Նկարչությունը նպաստում էերեխայի միջավայրի ճանաչողական գործընթացին: Նկարչությունը նպաստում է երեխաների գունային ճանաչողությանը և մտապահմանը, ավելին կարողանան դրանք օգտագործելառօրիայում:

Ինչպես գիտենք նկարչությունը երեխաներին հնարավորություն է տալիս լինել ինքնատիպ,ազատ արտահայտել իրենց զգացմունքներն ու ապրումները:Նկարել սիրող երեխաները հեշտությամբ կարող են իրենց պատկերացնել այս կամ այն մարդու կամ հերոսիդերում:Պարապմունքներին նկարելու ընթացքում մեծ ակտիվություն էր նկատվում, երեխաները նկարում էին ինքնորույն ,ազատ և երևակայած ամեն մի դետալ հանձնում թղթին:

Ազատ նկարչություն – նկարները նկարվում էին ինքնուրույն :Թեման ընտրվում էր երեխաների ցանկությամբ:Նկարի վերջում անհատական ներկայացվում էր նկարները:

Համատեղ նկարչություն –Ողջ խումբը լուռ նկարում էին մեկ թղթի վրա. Օրինակ՝ խումբը, նրա զարգացումը, տրամադրությունը, խմբում մթնոլորտը նկարչության ավարտից հետո քննարկվում էր խմբի յուրաքանչյուր անդամի մասնակցությունը,նրա ներդրման բնույթը և այլն[1]:

Արդյունքների վերլուծություն: Այսպիսով, երեխան խաղային,պայմանական ձևով իր երևակայությունը, մտացածը հանձնում է թղթին: Փորձում է մտացածը փոխանակել դիմացինի հետ: Նկարելու ընթացքում երեխան ամբողջովին ներկայացնում է իր աշխարհը, վախերը, զգացողությունները, հույզերը և այլն: Պարապմունքի ընթացքում երեխաները փորձում էին մտածել հասկանալ տեխնիկան, և ամենագեղեցիկ եղևնին ստանալու համար երեխաները նույնիսկ ավելացաց փշուրներով զարդարում էին եղևնին:

<<Կառուցողական խաղեր>>

Կառուցողական խաղերը իրենից ներկայացնում է բնույթով ստեղծագործ, արդյունավետ գործոնների օգնությամբ երեխան ձեռք է բերում մարդկային պրակտիկ գործոններ, կարողություններ և հմտություններ: Շինանյութով խաղերի ընթացքում զարգանում է երեխայի տարածական երևակայությունը և տրամաբանական մտածողությունը, ինչը նրան նախապատրաստում է ավելի բարդ գործունեության: Շինանյութով խաղերի հիման վրա ձևավորվում է կառուցողական գործունեությունը:

Շինարարական կառուցողական խաղերին բնորոշ է առանձնահատկություններ, որոնք լավագույնս բնութագրում են դրանց էությունը և մանկավարժական արժեքը:

1. Շինարարական կառուցողական խաղերի բովանդակությունը պայմանավորված է կառուցելու ցանկությամբ, արտաքին աշխարհի ձեռակերտ կառույցները տարբեր նյութերով վերարտադրելու հնարավորությամբ:

2. Շինարարական կառուցողական խաղերն իրենց բնույթով ինքնուրույն են: Երեխան սկսում է կառուցել, հստակ պատկերացնելով, թե ինչ է կառույցել և ինչպիսին պիտի լինի այդ կառույցը:
3. Շինարարական կառուցողական խաղերի ստեղծագործական բնույթը բխում է կառուցելու ընթացքում տեսքի, արտաքին առանձնահատկությունների նախագծման և դրան նպաստող կառուցողական գործողությունների որոշման ընթացքում:
4. Շինարարական կառուցողական խաղերի ընթացքը պահանջում է կառուցողական հմտություններ, որոնք երեխայի կողմից գիտակցաբար ձեռք են բերում հատուկ ուսումնական պայմաններում:
5. Շինարարական կառուցողական խաղերի կարևորագույն բաղադրամասը շինանյութն է, որի բազմաճանաչությամբ է պայմանավորված խաղի մտահղացման և ընթացքի արդյունավետությունը:
6. Բնական շինանյութը ամենահարմարն է կառուցելու համար, քանի որ այն հնարավորություն է տալիս երեխային շփվելու բնական բարիքների հետ: Բնական շինանյութի ընտրության համար երեխան փորձարկում է այն և տրամաբանական ընտրության կատարում: Բնական շինանյութով խաղերը հարստացնում են երեխաների զգայական փորձը, ակտիվացնում նրանց մտածողությունը: Հատուկ ստեղծված շինանյութով խաղերը զգալի տարբերվում են բնական նյութով խաղերից: Կառուցողական հմտությունների ուսուցումն իրականացվում է հետևյալ մանկավարժական եղանակներով

- *Կառույցի նպատակի և հիմնավորման*
- *Կառույցի նմուշի ցուցադրման*
- *Կառուցողական գործողությունների և նրբությունների ցուցադրման և բացատրման*
- *Կառուցողական ունակությունների դրսևորմանը նպաստող պրոբլեմատիկ իրադրությունների առաջադրման:*

Որոշ գիտնականների կողմից առաջարկվել են կառուցողական հմտությունների մեթոդիկա, որը ենթադրում է հատուկ պարապմունքների կազմակերպում, ուղղված երեխաների կառուցողական հմտությունների ձևավորմանը մանկավարժի հետ համատեղ գործողությունների ընթացքում: Նախադպրոցական կառուցողական հմտությունների ձևավորմանն ուղղված հատուկ ուսուցումը մանկավարժական որոշակի քայլերի կազմակերպումն է ու հաջորդական կիրառումը:

Դրանք են՝

1. *Նպատակային էքսկուրսիաների կազմակերպում*
2. *Կառուցում նմուշով*
3. *Կառուցում առաջադրված թեմայով*
4. *Կառուցում առաջադրված պայմաններով*
5. *Սեփական մտահղացմամբ*
6. *Կառուցում մոդելով*

Կառուցում մոդելով: Երեխաներից պահանջում է լարված աշխատանք՝ մոդելի թաքնված բաղադրատարրերը և հատկությունները ուսումնասիրելու նպատակով: Այն զարգացնում է երեխաների ընդունակությունները:

Նմուշով կառուցելը ն/դ տարիքի երեխաների ամենատարածված ձևն է, որի հետևանքով զարգանում է երեխաների կառուցողական հետաքրքրությունները:

Պայմաններով կառուցում: Այս մոդելը որոշակի ձևով սահմանափակում է երեխաների կառուցողական ինքնուրույնությունը, քանի որ նրանք հայտնվում են այնպիսի պայմաններում, որտեղ պետք է մտածի առաջադրանքի կատարման մասին նշված սահմաններում: Կարող է ստեղծել նորը կամ վերանայել նախկին պատրաստված շինությունը ըստ ներկաբացված պահանջի:

Կառուցում մտահղացմամբ դա կառուցողական աշխատանքի այն ձևն է, որտեղ ամեն ինչ նախաձեռնում է երեխան: Մանկապարտեզում երեխային կարելի է առաջարկել՝ <<ստեղծիր պատկեր>> խաղը, որտեղ կան տարբեր գույներով քարտեր և անգույն առարկաներ: 7 տարեկանում երեխաները պետք է կարողանան ընտրել առարկաները ըստ գույների, տեղադրեն որոշակի գույնի քարտը դրա ձևին համապատասխան առարկայի մեջ: 7 տարեկանում երեխաները պետք է կարողանան ընկալել հետևյալ հասկացությունները՝ կետ և տարածություն: Տվյալ տարիքի երեխաները կերպարվեստի պարապմունքների ժամանակ, կարող են օգտագործել փայտիկներ, պլաստիկ նյութերից պատրաստված առարկաներ, թուղթ, խմոր, կտոր, բնական և այլ անվնաս նյութեր որոնց օգնությամբ կարելի է ստեղծել տարբեր ստեղծագործական աշխատանքներ, կառույցներ:

Պարապմունք ուղղված խոսքի զարգացմանը՝ -«Ձնագնդի»

Ինչպես գիտենք երեխան, արդեն 5-6 տարեկանում կարողանում է իսկապես խոսել՝ճիշտ արտասանելով հնչյունները, կառուցել նախադասություններ: 5-6 տարեկան երեխաները, գործելով առարկաների հետ ցանկանում են իմանալ նրա կառուցվածքը, նշանակությունը, օգտագործման ձևը և այլն: Շատանում են հարցերը երեխաների մոտ, որը մեծահասակների հետ շփման ձև է: Եթե դաստիարակը աջակցում է երեխայի հարցերին, ապա ձևավորվում են անձի արժեքավոր գծեր հետաքրքրասիրություն, հարցասիրություն, դիտողականություն: Եթե դաստիարակը ոչ մի նոր բան չի տալիս նրան, ապա երեխայի մոտ կորում է հետաքրքրությունը տվյալ պատմության նկատմամբ

Արդյունքների վերլուծություն –խաղի նպատակն է զարգացնել երեխայի մտածողությունը, խոսքը, արագ կողմնորոշվելու կարողությունը: Խաղի ընթացքում երեխաները կանգնում են իրար դիմաց նրանց մեջտեղում սեղանի վրա յուրաքանչյուրին մոտ դրված են թղթեր: Հրահանգ է տրվում առջևում կանգնած երեխան վերցնում է թղթերից մեկը և անկանոն ծալելով ստանում ձնագնդի և ասելով որևե մրգի անուն փոխանցում է դիմացինին որպեսզի դիմացինը ևս ավելացնելով

ձնագնդիի ծավալը թվի որևէ մի միրգ, որը չպետք է կրկնվի և փոխանցի հաջորդին: Խաղը կրկնվեց 3 անգամ տարբեր թեմաների շուրջ:

Կառուցողական գործունեության և խաղերի ընթացքում երեխաները համագործակցում էին միմյանց և դաստիարակի հետ, օգնում և սովորում մտածել: Կառուցողական խաղերն ուղղված էին երեխաների մանր մոտորիկայի և խոսքի զարգացմանը, այն երեխաները, որոնք հետազոտության առաջին փուլում համարձակ չէին և գրեթե չէին համագործակցում ընկերների հետ, հետազոտության արդյունքների վերլուծությունից պարզվեց, որ իրականացված հետազոտական աշխատանքն արդյունավետ էր նրանց համար:

Կառուցողական գործունեության արդյունավետ արդյունքների ստացման համար առաջնային են մանկավարժական պայմանների ստեղծումը, այն է դաստիարակի մասնագիտական հմտություններ, համապատասխան առարկաների, դիդակտիկ պարագաների, բնական շինանյութերի, լեգոների, փազլների, առկայությունը խմբասենյակում: Ուստի շատ կարևոր է, որպեսզի մանկապարտեզի մանկավարժական գործընթացում կարևորվի և իր ուրույն տեղն ունենա կառուցողական գործունեությունը՝ համակողմանի զարգացած երեխաներ դաստիարակելու համար:

Եզրակացություն

Ուսումնասիրելով ավագ նախադպրոցական տարիքի երեխաների կառուցողական գործունեություն թեման, կարող ենք եզրակացնել, որ նախադպրոցական տարիքը երեխայի զարգացման կարևորագույն շրջանն է համարվում, և որ այս տարիքում է խաղի միջոցով զարգանում երեխայի հոգեկան բոլոր գործընթացները[2]:

Կառուցողական աշխատանքները բացահայտում են ավագ նախադպրոցականների խոսքի առանձնահատկությունները և թույլ են տալիս երեխային կառուցողական աշխատանքների կատարման ժամանակ անգիտակցաբար ցույց տալ այդ բոլոր առանձնահատկությունները[4]:

Կառուցողական պարապմունքները նպաստում են նախադպրոցականների մտածողության զարգացմանը, քանզի հանդիսանալով երեխայի խաղի գործունեության գլխավոր խթանիչ նպաստում է երեխայի ակնառու-գործնական մտածողությունից անցում կատարել ակնառու-պատկերայինի: Կառուցողական աշխատանքները թույլ են տալիս ավելի լավ ճանաչել երեխային, տեսնել նրան դերային խաղերում, պարապմունքների ընթացքում զարգացնելով մանր մոտորիկան զարգանում է նաև երեխայի մտածողությունը: Կառուցողական աշխատանքները նպաստում են նախադպրոցականի սոցիալականացմանը, որն էլ իր հերթին նպաստում է երեխաների խոսքի և հաղորդակցման զարգացմանը:

Կառուցողական աշխատանքները բավականին մեծ նշանակություն ունեն երեխայի մտածողության և խոսքի զարգացվածության գործում, քանի որ կառուցողական նյութերով աշխատանքը թույլ է տալիս երեխաներին ծանոթանալ բնական և արհեստական նյութերի հետ[1]:

Գրականության ցանկ

1. Մանկապարտեզի ավագ խմբի (5-6 տարեկանների) կրթական համալիր ծրագիր ՀՀԿԳՆ. – Երևան: 2008թ. /Մանկապարտեզի ավագ խմբի համալիր ծրագիր 2021թ.
2. Իմացական գործընթացների պրակտիկում (Հիշողություն, մտածողություն և խոսք, երևակայություն): Մտածողությունն ապահովում է օբյեկտիվ աշխարհի, նրա օրենքների ճանաչում: Ուսումնամեթոդական ձեռնարկ / Կազմ. և գլխ. խմբ. Դ. Ռ. Հայրապետյան- Եր. 2009,
3. Парамонова Л. А. Теория и методика творческого конструирования в детском саду: М.: Издательский центр <<Академия>>, 2002.
4. Л.В.. Куцакова <<Конструирование и ручной труд в детском саду>>: М.1990г.

https://detki.guru/razvitie-rebenka/zanyatiya-s-rebenkom/zanyatiya-v-3-4-goda.html

5.Համացանց